ԲԱՍԵՆ

23. ՄԻՐԶԱ ՄԱՀՄՈՒՏԻ ՀԵՔԻԱԹԸ

Վախտի մեկին ապրում էին մեկ աղքատ մարդ ու կնիկ։ Աստուծ էս մարդուն էրեխա չի տալում։ Գալում էխթիարնում են, վախտերը անցնում է ու էրեխա սոնղ չի էղնում։

Ամեն օր նստում են էտ աղքատ էխթիար մարդ ու կնիկ իրանց սև դարդն են լալում թե.— Մենք էս մեր ըխթիար վախտ ինչը՞խ պտի ապրինք։

— Աստու դիվնին մեռնիմ,— ասում է կնիկը,— հեչ որ չէ, մեկ աղչիկ տար, հիմի էրթար հաց թոփ էներ, բերեր մեզի պահեր, յա թե չէ տնփեսա կուտանինք մի տղի, մեզի էս ըխթիար վախտ կը պահեին, ինչունի հողը մտնեինք։

— Այ կնիկ,— ասում է մարդը,— ի՞նչ էս դարդ անում, հալբաթ էն ողորմած աստուծ, որ մեզի էս օրն է հասուցեր, կարա մեզի մի ճար էլ անել։ Աստուծ հ՞ո՞ւմն է անոթի մեռուցեր, որ մեզի մեռցընե։ Էլի աստուծ ողորմած է, հալբաթ մեզի էլ մի դուռ բաց կոնե։

Մի հ՞իրիկուն էսենց մարդ ու կնիկ նստել իրանց սև դարդն էին լալում, մտածում են, թե. «Մեր սոնղը մո՞նց կրլլի»։ Էտ խոսալու, մտածելու վախտ բիրդան էտոնց ալաչուխը մտնում է մեկ վիշապ օձ։ Մարդ ու կնիկ որ տեսնում են, թուք մուք բերններու մեշ չորանում է, թե՝ «Վալլահ էս վիշապ էկավ մեզի կուլ պտի տա»։

Վիշապը հեչ բան չի ասում, քաշվում էրթում է մի քոշեն իրա համար կուծուծվում է։

Ըխթիար մարդ ու կնիկ հ'ուզում են տնից հ'ելնին փախնին, տունը տան էտ վիշապին, բալքի ազատվին ու չեն կարող, կոսես թե մի բան, մի ահ, էտ մարդկանց կապել չի թողում տեղից ժաժ գան։ Էսենց ահուքներուց չոր փետ էին գառեր տեղն ու տեղ, ձեն չկար։

Մե խելի էսենց մնացին, վերջ մարդը քիչ ուժ ու կող արեց, յավաշ փըսըրտաց, էնենց որ վիշապը չը լսե.— Այ կնիկ, յազո՞ւզ ենք վախենում, հազըր մենք ասուց խնդրում էինք, որ մեզի էս նեղութունից ազատե, իշթա պտի ազատե, էս վիշապին հրաման է տվեր, էկավ մեզի կուլ տա։ Լավ կէղնի էս գեշ օրերեն կազատվինք։ Ի՞նչ է մեր քաշածը, մեռնիմ ասսու սրտին, երեխա չունինք, քասիբ, ինչունի հ'իրկուն հալղի դռներն ենք ման գալում, որ ինչ է, մի կտոր չոր հաց տան իրանց խեբուն, էն էլ հազար մունաթով, քիթ ու մըռթով, որը լավ է ասում, որը գեշ, որը աստուծ տա է ասում, որն էլ ծիծաղում, խոլասա, մեր տեսած օրը օր չէ, լավն էն է որ մեռնինք ազատվինք։

Մարդ ու կնիկ էսենց իրարու հետ յավաշ խոսում էին.·«Հա՛, հիմի վիշապը գելնի մեզի կուլ կը տա, հա՛, քիչ հետաց, էսենցով գիշեր անցնում էր, ու օձ վիշապը իսկի տեղից ժաժ չէր գալում։ Ըխթիար մարդ ու կնիկն էլ ահեկուն սաղ գիշեր աչքերուն քուն չէկավ, էնենց բաց աչքով լուս հ'ելան։

Աղոթրանը ծեքեց, օձ վիշապը յավաշ հ'ելավ տեղից, որ էրթա գուրս, մարդ ու կնիկ ահու տեղոց տեղ ցմքան։

— Վալլա, հա,— ըսին,— էս ա հ'ելավ մեզի կուլ պտի տա։

Ամա օձը իսկի տերն էլ չէղավ, քաշվավ էկավ, գնաց դուրս։

Էստեղ նոր երկու ըխթիարները քիչ սոլուղ առան, նոր պարկան քիչ քնելու, որ դինչանան հ'ելնին էրթան իրանց համար քիչ հաց, բան թոփ էնեն, բերեն ուտելու։

Ըխթիարները որ քիչ քնան, հանգստացան, հ'ելան գնացին քաղքի մեջ հաց ժողվելու։ Էտոնց տունը քաղքից դուրս էր։ Քաղաքն որ գնացին, հալղ էտոնց հ'երեսի ռանգ որ տեսան, զարմացան թե, էս մարդիկ գերեզմնից են քաշած հանած էղնին։ Հա՛, հալղը տեսան, համա ո՞ւմ դարտն էր կռեր, թե էտ քասիբների հալը հարցնեին։ Ըխթիար մարդ ու կնիկ էլ հ'ուզում էին հալղին հայտնել օձ-վիշապի մասին, էլի վախենում էին, թե հլա սպասենք, աշենք թե ինչրխ կըլի։

Ինչունի հ'իրկուն ման էկան։ Ամեն օրվա պես հաց, բան թոփ արին էկան տուն, համա էլի ահը սրտերուն էր, թե. «Աճապ էլի՞ վի-

ջապը պտի գա թե չէ։ Մութը հ՚ընկավ թե չէ, էլի օձ վիշապը սո-
ղալով ներս մտավ, գնաց էլի իրան տեղ էն քոշեն կուծուծվավ։ Էտ
օր ըխթիարները էլ էնքան չեն վախենում, հ՚իմանում են, որ իրանց
վնաս տալող օձ չէ։ Էտ օր էլ էտենց անցնում է։ Գիշերը լուսանում
է, սարախտան օձ վիշապը էլի քաշվում, տնից էրթում է։

Մարդը վերցնում ասում է.— Ա՜յ կնիկ, էս ինչրխ բան է, ըստուր
մեջ մի բան կա, հմա աշենք թե ի՞նչ է։ Թե որ հալդին, մեր դրկից-
ներին ասենք, դու արի տես որ գա մեզի կուլ տա, թե չասենք, ըս-
տուր մեջ մե գաղտնիքմ կա։ Ես մեր մեծերից իմացել եմ, որ
ասում էին. «Թե որ մարդու տուն օձ մտնի ու զիան չտա, էն օձը
խերով է, ընտոր վրեն, որ մարդ իր շորերից հանե քցե, յա մարդ է
դառնում, յա խաղնա։ Ես էսենց եմ ասում, որ էլ հեչ մեկին էլ բան
չասենք, հ՚եսօր էլ որ էկավ, ես կը հանեմ իմ փոխանս կը քցեմ օձի
վրեն, ինչ գալում է, թող գա։

Էտ օր էլ, էլի գնացին քաղքի մեջ իրանց համար ողորմութուն
թոփ անելու, ինչունի հ՚իրկուն ման էկան, հ՚իրկուն արևն օր մեր
մտավ, դառան էկան տուն, դուռը բացին ներս մտան, դինշացան,
իրանց ճրագը վառին՝ որ մութը հ՚ընկավ։ Քիչ իրանց համար հաց,
բան կերան։ Ամեն օր վախենում էին օձից, հ՚եսօր, գիտես թե օձի
ճամբեն են աշում։ Օձի գալու վախտը որ էկավ, մեկ էլ աշեցին որ,
էլի օձը ներս մտավ, գնաց իր տեղ, քոշեն կուծուծվավ։ Մարդը հա-
նեց իր փոխան, էլ չը վախեցավ, տարավ դյուզ քցեց օձի վրեն։
Մարդ փոխան որ քցեց օձի վրեն, մեկ էլ աշեց, փաթ տրաքվավ օձի
կաշին, էնենց ձեն տվեց, որ քիչ մնաց խեղճի ալաչուխը բլեր։ Օձի
կաշին պատռավ թե չէ, միշեն մի սիրուն դալիղանլի տղա դուրս
հ՚ելավ որ օխտն օր չ՚ուտես, չ՚խմես, սեյր անես։

Մարդ ու կնիկ էնենց վախեցան, հետ թռան.

— Ի՞նչ եք վախենում,— ասում է տղեն,— Դուք շատ ասսուց
աղաչանք, պաղատանք արիք, աստուծ խեղճ էկավ ձեզի, ընձի տղա
տվեց ձեզի, ըստից հետև դուք կէղնիք իմ ծնողներ, ես ձեր ըստեր
զավակ։ Համա մի բան ասեմ՝ չըլլիմ, չիմանամ, որ մեր սրոը ուրիշ
մարդու ասեք, թե որ ասեցիք, ես որ կէրթամ կը կորիմ, էլ ընձի չեք
կարա գտնիլ։

Մարդ ու կնիկ աղոթք արին, ասսուն փառք տվին, որ իրանց
էս նեղութունից ազատեց։

— Լավ տեսա՞ր, այ կնիկ, ես չէի ասում, թե աստուծ ողորմած
է, էնոր համար չաթին բան չկա։ Դու ղատիմի գանգատ էիր անում,
թե մեզի զավակ աստուծ չըտվեց։ Տեսա՞ր աստուծ մեր էս ըխթիաք

վախտերուս ինչրխ ողորմած, մի հասած, կատարած տղա տվեց։

Անցավ մի քանի վախտ, տղեն տնից դուրս չէր հ'ելնում։ Հերն ու մերն էլ հալղին օնչիչ չէին ասում։ Մինակ, հալղ աշում տեսնում էին, որ էս ըխթիարները հ'առաջ նիաթներ արած, ինչրխ մեռած մարդ, հիմի շատ ուրախ են ման դալում, ինչրխ թե թազա, ջահել, ու հեչ մեկը չէր կարա բան հասկնալ։

Մի ջանի օր որ անցեր էր մե հ'իրիկուն տղեն հորն ասում է.— Հայրիկ, առավոտ վաղով կէրթաս թագավորի աղջիկ ընձի կ'ուզես։

— Օրթի, էդ ի՞նչ ես ասում, մեր օրը մեզի հերիք չէ, մեր քասիրութուն, մեր դարդ ու ցավը, մենք մեզի ուտելու հաց չենք կարա գտնի, մենք մո՞նց էրթանք թագավորի աղջիկ հ'ուզենք, հալղ ի՞նչ կոսեն մեզի։ Մենք ինչունի հ'իրկուն դռներից հաց ենք թուփ անում, հիմի էրթանք թագավորի աղջի՞կ հ'ուզենք, դու սաղ քաղաք մեր վրեն պտի խնդացնես։ Կարգվել ես հ'ուզում, էրթամ մեր լման մե աղքատ քասիբի աղջիկ հ'ուզեմ։ Ես յաղո՞ւղ եմ էրթում թագավորի դուռ կայնում, որ անպատիվ էղնիմ։

— Չի ըլի, որ չի ըլի, ես թագավորի աղջիկ պտի առնիմ։ Ես քեզ կոսեմ, դու գնա, անպատիվ չես էղնում, քու ինչ բան է։

Հ'եգսի օր, առավոտ, խեղճ ըխթիարը աշում է որ էլ իլլաճ չ'կա, հ'ելնում էրթում է։ Էրթում է ու ճամբեն իրան իրան մտածում. «Էսենց էլ բան էղնի, ես մո՞նց էրթամ թագավորից բարեկամութուն խնթրեմ, էս ըխթիար վախտս, մե լավ էլ ծեծեն, անպատվեն։ Ինչ անեմ, չարեն ինչ, աստուծ էս ըխթիար վախտս որ ընձի տղա տվեց, ես մո՞նց էնոր սիրտը կոտրամ»։

Էրթում հասնում է թագավորի դուռ, զարաղոլներ գալում են հ'առաջ կռում թե.— Ի՞նչ ես ասում։

— Ես թագավորի հետ գործ ունիմ, ընձի թող տվեք ես ներս էրթամ։

— Դու ի՞նչ ունիս թագավորի հետ, այ հարիֆ, ժողովք ես անում, առ քեզի էսքանի կոպեկ, դառի գնա։— Մի քանիսն էլ ծիծաղում էր, ուշունց էին տալում դես ու դեն։

Ըխթիարը սալթ կեցած յալվար է հ'ընկնում, որ իրան բաց թողնին էրթա թագավորի մոտ։

Դռան ղալմաղալը ներսից թագավոր լսում է։ Մարդ է ղրկում թե. «Աշեք էտ ինչ ղալմաղալ է»։

Ղարաղոլներից մեկը գալում աշում է, որ մի աղքատ մուրացկան, որ յալվար է հ'ընկնում ղռան ղարաղոլներին թե. «Ընձի բաց թողեք էրթամ թագավորի մոտ բան ունիմ ասելու»։

Ծառան էրթում թագավորին ասում է, որ մեկ աղքատ ըխթիար հ'ուզում է թագավորին տեսնել։

Թագավոր հրաման է տալում, որ ներս թողեն։

Ըխթիտրը ներս է մտնում, էրթում է, խնամաթոռքի վրեն նըստում է։

Թագավոր աշում տեսնում է ու գլուխը պտտցնում թե. «էս ինչըխ բան է, մի աղքատ քասիր մարդ գա ու թագավորի խնամաթոռքին վրա նստի, յա էս մարդը խելար է, յա մի բանըմ կա»։

Թագավոր կանչում է էտ մարդուն ու ասում է.— Ա՜յ մարդ, դու մի քասիր մարդ, յաղո՞ւզ էկար խնամաթոռքի վրեն նստար, դու չե՞ս հ'իմանում, որ էտ աթոռի վրեն էն մարդ կարա նստել, որ թագավորի աղջիկն է հ'ուզում։ Դու թե խերիաթ էիր հ'ուզում, ղարաղոլներին կարայիր ասել, թե գանգատ ունեիր, քաղքի մեջ դատավոր կա, էս ի՞նչըխ բան է։

— Թագավոր ապրած կենա, էտոնք հեչ մեկն էլ իմ հ'ուզածներ չեն, ես էկեր եմ աստծու օրենքով քու աղջիկը հ'ուզեմ պտի իմ տղին։ Էտոր համար էլ խնամաթոռքի վրեն նստա։

Թագավոր գլուխ կախում, խելի մտածում է ու մտածում է, հեչ չի հ'իմանում, թե ինչ անե։ Հետո վերցնում ասում է.— Ըխթիար, ես իմ աղջիկը քու տղին կտամ, քեզի իրեք բան կոսեմ, թե արեցիր, ագջիկս կտամ, թե չ՝արեցիր, քու գլուխն էլ ու քու տղինն էլ զարնել կուտամ։ Մեկ որ՝ հ'եգուց առավոտ, էն իմ մաշինի ջաղաց որ կա, էնոր մոտ մի լավ ջաղաց քեզնից կ'ուզեմ, դեմ յոթ ջաղջի քար մեջ դառնա, էնենց որ իմինիցս լավ էղնի, կարացիր շինել՝ ղաթի լավ, չկարացիր՝ գլուխդ կէրթա։

Էտ աղքատ մարդը հ'ելնում, գալում է տուն։ Ճամբին իրան իրան մտածում է. «Ըշթը իմ հախս էլ էս էղավ, որ հ'էգուց թագավոր իմ գլուխ պտի կռե։ Ջոթի լավ էլ կէղնի, որ ես գեշ օրից կազատիմ»։ Էսենց մտածելով գալում հասնում է տուն, որ տղեն ու կնիկ իրան են բաքլայում։

— Ի՞նչըխ արիր հայրիկ, ընչի՞ ես էտենց նիաթներդ կախած։

— Է՜հ, օրթի, ախր ես քեզի հ'ավաշտուց ասի՝ թե գործ չունիս, մեր ի՞նչ հախն է թագավորի հետ նստել, կայնել, մենք թագավորի լայեղ մարդ չենք։ Աղքատը իր թավուր մարդու հետ պետք է նստի կայնի։ Օգուտն էն էղավ, որ հ'եգուց թագավոր գլուխս կը կռե, ես էլ կը պրծնիմ, դուք էլ։

— Ջանըմ, քեզի ի՞նչ ըսավ թագավոր, որ դու էտքան էլ վախենում ես, մե ասե աշեմ է՜։

— Ի՞նչ ըսա՛վ, թագավոր ըսում է, թե. «էս գիշեր ինչունի առավոտ իմ շաղչիս պես մի շաղաց կը շինես, մեջն էլ օխտը քար դառնա իմ շաղչից լավ, ղաթի աղչիկս կտամ քու տղին, չ՝շինեցիր գլուխդ կը կռեմ»։ Է՜հ, մենք էս քասիրության մեջ, էն էլ մեկ գիշեր, ի՞նչրխ օխթ քարեն մի շաղաց շինենք։ Գյուղ գորա, առավոտ թագավոր իմ գլուխս պտի կռե։

— Է՜... էտոր համար ես էտքան դարդ անում։ Թագավոր ինչրխ մեկ ծանր բան է ասե, որ դու էլ էտքան վախենում ես։ Արի՛, արի՛, դու ես գիշեր դինշ պառկի քնի, աստուծ օղորմած է դու ըսկի թալաշ մի քաշե։

Քնելու վախտ էղավ, ըխթիար մարդ ու կնիկ հ՝ելան պարկան քնան։ Հորն ու մոր քներ որ տարավ, քնան, տղեն հ՝ելավ տեղից իր մատնին պտտացուց, մեկ էլ աշեց էրկու սև արաբ հազր կայնան գիմաց։

— Հա՜, ըսա, ինչ ես հ՝ուզում, շինենք թե քանդենք։

— Ձեզնից հ՝ուզում եմ էս գիշեր թագավորի շաղչի մոտ շինեք մի շաղաց, մեջ օխտը քար դառնա։ Էնենց էղնի որ թագավորի շաղչից էրկու անգամ լավ էղնի, տեսե՛ք, ինչունի սաբախտան ձեզնի հազր եմ հ՝ուզում։

— Լավ, մեր գլխի վրա,— ըսին ու կորան։

Տղան էլ պառկավ, դինշ քնավ։

Գիշերը լուսանում է, առավոտվա էն լավ, սարին վախտ թագավոր իր աղչկա հետ քոշքու սարայու վրեն ման էր գալում։ Էտեղից լավ էրեվում էր իր շաղացը։ Բիրդան աչքը էն կողմ գառուց տեսավ, որ իր շաղչի մոտ մեկ թազա շինություն է էրեվում, իրանի շինութունից տասն անգամ լավ։ Թագավոր հերսոտավ կատղեց, թե.— էտ վեվ է էտ ղոչաղ մարդը, որ իմ սինոռի մեջ իրա համար շինութուն շինե։

Թագավորը մոռցել էր, որ ինք հ՝երեկ աղքտին ըսավ թե. «Իմ շաղչի մոտ մի շաղաց պտի շինես»։

Կանչեց Լալին ու ըսավ.— Լալա, էս սհաթին կէրթաս կհ՝իմանաս գես, թե էտ վեվ է, ինչ մարդ է։

Ըխթիարն էլ առավոտ շուտ հ՝ելավ աշեց, որ մի շաղաց է շինված թագավորի շաղչի մոտ, ղորթ որ էնոր շաղչից տասն անգամ լավ։ Ուրախութունից էլ չհ՝իմացավ թե ի՞նչ անե, հ՝ելավ ու հայտնվեցավ դիպա թագավորի պալատը։ Էդ վախտ գնաց հասավ թագավորի դուռը, որ թագավորն էլ ամբ էր անում Լալին թե. «էս սհաթիս պետք է էրթաս հ՝իմանաս»։

Լալեն թարտիր տեսավ որ էրթար, ղարաղոլները ներս մտան, թագավորին ըսին թե.— Թագավոր ապրած կենա, հ'երեկվա ըխթիարը էլի էկել է։

Թագավորի միտն ընկավ, որ էտ ջաղացը էտ աղքտին է, շուտ հետ կանչեց Լալին, որ չէրթա։ Լալեն հետ էկավ։

— Հա, Լալա, նոր միտս էկավ, էտ շինությունը էս գալող աղքտի ջաղացն է, որ հ'երեկ էկած էր իմ աղջիկ հ'ուզելու։ Էտոր քրչոտ շորերի տակ շատ բան կա։ Հ'երեկ ես խնդացի էտոր վրեն, համա բայլու է, էդ մարդ իմ աղջիկս պտի տանի։

Թագավոր իրավունք տվել էր, որ աղքատ ներս էրթա։ Ղարաղոլներն էլ հ'ավալքու պես չը հակառակվան ըխթիարի հետ, անձեն թողին գնաց։

Պատոտված շորերով ըխթիարը գնաց դյուզ էլի նստավ խնամաթոռքին։

Թագավոր ներս է կանչում ըխթիարին ու ասում է.— Այ ըխթիար մարդ, դու իմ հ'ուզած ջաղացը շինեցի՞ր։

— Շինեցի, թագավոր ապրած կենա, հ'ուզում ես մարդ ղրկե թող տեսնի, թե որ քու ջաղցից էլ լավ չէղավ, իմ գլուխը կռել տուր։

— Լավ,— կոսե թագավորը,— ես քեզի երեք բան եմ խոսացեր որ անես, մեկը շինեցիր, էրկուսը մնաց, թե որ էն էրկուսն էլ շինեցիր, ղաթի իմ աղջիկս տվեր եմ քու տղին, թե որ չշինեցիր՝ ղաթի գլուխդ կուտամ։ Հ'եգուց էս վախտ քեզնից հ'ուզում եմ մի ղաթ տուն, էնենց, որ իմ էս պալատներից, քոշք ու սարայից լավ էղնի։ Օթախները իմ օթախներից լավ, տան հ'առաջ խաս բաղչեն, մառմառ հավուզը մեջ, որ իմ աղջիկ հ'ելնի էրթա ման գա խաս բաղչի մեջ, գա մառմառ հավուզի պաղ ջրից խմե, լվացվի, դինջանա։ Թե չը կարացիր շինել հ'եգուց քու գլուխը կը կռեմ։

Աղքատը գլուխ կախեց ու գնաց դիպա իր տուն։ Տղեն ու կնիկ նստած մարդուն էին աշում, թե. «Տեսնինք, ինչ խարար է բերում»։ Աշեցին որ գալում է, համա շլինք տվածի պես, նիաթներ կախած, էնենց որ լուն հ'երեսեն հ'ընկներ քառսուն թիքա կը լիներ։

Ներս է գալում թե չէ, տղեն հարցնում է.— Ի՞նչ է եղել հայրիկ, որ էտենց նիաթներդ կախել ես, չըլլի թե թագավոր քեզի բան է ասե, թե որ գեշ բան է ասե, էս սհաթիս էնոր թախտը տակն ու վրա կոնեմ։

— Էլ ի՞նչ պտի ասե որ, վաղ իմ գլուխը պտի զարնե. էնենց մի բան է հ'ուզում որ, հ'ուրտից պտի մենք կարանք դրստել։ Թագավորն ասում է, որ «էս գիշերվա մեջ ձեզեն էնենց մի քոշք ա

սարայի տուն եմ հ՚ուզում, որ իմ տներից իմ օթախներից լավ, մեջ ամեն տեսակ զարթարանքով, պատեր թոմար խալի խալիչաներով, հ՚առաջը խաս բաղչեն, մառմառ հավուզը մեջ, որ իմ աղջիկ էրթա մեջ ման գա, պաղ ջուրը խմե ու լվացվի»։ Դե՜, արի ու էս թոմար հ՚ուզածներ դրստե, որ իմ գլուխ չէրթա։

— Էտոր համ՚ր գու նիաթ-միաթգ կախել ես, գիտես թե թագավոր հ՚եգուց քու գլուխը կը կռե։ Հեչ գարգ մի անի, քու տղեն սաղ է։ Քու ի՚նչ բան է,— կոսե,— գու էլի հ՚երեկ գիշերվա պես պառկի, հանգիստ քնի, աստուծ կը հոգա։

Հ՚իրիկուն էղավ, հ՚ելան ամեն իր տեղը մտավ պարկավ։ Ըխթիարներու քունը տարավ, քնան։ Տղեն զաթե բսկի քուն չուներ, տղեն տեզեն հ՚ելավ, մատնու հ՚ակը պտտցուց՝ էրկու արաբը դեմ քիր կեցան։

— Հա, Միրզա Մահմուտ, ի՚նչ ես ասո՚ւմ, քանդենք թե շինե՚նք։

Օձից հ՚ելած աղի անունը Միրզա Մահմուտ է էղնում։

— Քանդելու հեչ բան չկա, շինելու՝ շատ։ Էս գիշեր ձեզնից հ՚ուզում եմ էնենց մի քոշք ու սարայով օթախներ, որ թագավորի տունը ձեր շինածի մոտ մի ալաչուխ էղնի։ Ամեն թաբդիրը մեջ հազըր, պատեր թոմար խալի-խալիչա, տան հ՚առջև խաս բաղչեն, մառմառ հավուզը, մեջ հազար թավուր ծաղիկներ, բոլոր բուսած։ Էլ ի՚նչ ասեմ, էնենց մի բան շինեք, որ իսկի աշխարքի մեջ չկա։

Արաբներ գացին Միրզա Մահմուտի հրաման կատարելու։ Միրզա Մահմուտն էլ յորղան քաշեց գլխին ու քնավ։

Թագավորի քունը էտ գիշեր է՚լ չտարավ թե. «Ըճապ էտ աղքատ մարդ ի՚նչ դյուզան ունի, որ էտենց բաներ է շինում։ Մեկ գիշերվա մեջ իմ ջաղցներից լավ դրստելը ղոլայ բան չէ։ Բալլու է, որ տունն էլ շինե դը»։

Սաբախտան թեզ մարդ ու կնիկ հ՚ելան տեսան որ, ի՚նչ տեսնին, իրանց պզգիկ ալաչուխի տեղ, ղոշա, մե ահագին քոշք ու սարայի տուն, օթախներ թոմար խետված, պատերը խալի-խալիչա քաշած, խաս բաղչեն մառմառ հավուզով։ Էտ սիրուն շինութուն որ տեսան՝ բերներ մնաց բաց։ Սաղ քաղքի հալը էս բանը որ տեսան՝ բերները մնաց բաց, թե էս ի՚նչ զորութուն է մեկ գիշերվա մեջ էսենց քոշք ու սարայի շինել, էնպես որ թագավորի շինութունից տաս անգամ լավ։

Թագավորն էլ իր վախտին հ՚ելավ լվացվավ, ղահվա խմեց, էլի հ՚ելավ իր աղջկա հետ քոշք ու սարայու վրեն, ման էր գալում, աշեց

տեսավ որ, ի՞նչ տեսնի, մի տուն, էնենց մի տուն, որ իր թագավորական տներ ինչրխ որ մի ալաչուխ էնոր մոտ։ Արև որ նոր դիպեր էր էտ տան բաղաններին, պատերին ու փանջարաներին, էնենց էր պլպլում, որ կոսես թե թոմար անգին քարով է շինված։

— Հե՞յ վախ,— ասում է թագավորը,— էտ ըխթիարը իմ աղջիկը պտի տանի։

Միրզա Մահմուտի հերը տղի ու կնկա հետ ման է գալում օթախներ, աշում տեսնում է օթախների մեջ կառավաթներ, ստոլներ, պատերին թոմար պատկերներ, խալի-խալիչաներ քաշած։ Էլ ըխթիարը չի սպասում, հանում թափում է իր վրայի պատռտած շորերը։ Տղան բերում է հոր մեկ ղաթ լավ, թագավորավայել շորեր հագցնում ու ղրկում է թագավորի մոտ։

Թագավորն-էլ, որ էս շինութունը տեսնում է, ման գալը թողնում, էրթում նստում է թախտին ու մտածում է թե. «Մնաց մեկ բան, էն էլ ի՞նչ տեսակ բան հ՞ուզեմ որ էտ մարդը բալքի չկռնա դրստե, որ ես էտոր գլուխը կռեմ»։ Չէ, թագավոր էտ բան էլ է գտնում։

Զարազոլներ աշում են, որ էլի էն ըխթիար գալում է, համա ղատմի օրվա կեղտոտ շորերով չէ, թագավորի շոր է հագե։ Էկավ մոտեցավ թե չէ, էլ օնչով ամոթու մոտ չգնաց, էնոր շորերից էս հեղ ամչրցան, բան չհարցուցին, ու հ՞առաջն էլ չ՝էկան։

Ըխթիարը դյուզ քշեց, գնաց խնամաթոռ նստավ, թագավոր զարմանում է որ ըխթիարը ղատմի քրչոտ կեղտոտ շորերով էր գալում՝ հ՞եսօր էնենց մի ղաթ հալավ էր հագել, որ թագավորի շորերից է։ խաս էր։ Էս անգամ ըխթիար էլ չէր ամչնում թագավորից, դյուզ ու առանց ամչնալու խոսում էր թագավորի հետ, էլ հ՞ընչի էր թագավորից ամչնում ու վախենում որ, տները թագավորի տներից լավ, ջաղացը՝ ջաղցից, շորերն էլ թագավորի շորերից էլ լավ։

— Ա՞յ մարդ, էրկու բան հ՞առաջարկեցի քեզի, էրկուսն էլ տեղով դրստեցիր, մնաց մեկը, թե որ էն մեկն էլ դրստեցիր, քեզի էլ ուրիշ բան չի մնա, էն է, որ պսակի թաբտիր կոնես։ Թե որ չը դրըստեցիր, գլուխդ կուտամ։ Ես քեզնից հ՞ուզում եմ, որ էս գիշերվա մեջ դրստես մի հ՞էգի, քու տներից ինչունի իմ պալատներ, ամեն տեսակ կանանչ ծառերով, ծաղիկներով զարդրած։ Հ՞էգու մեկ կողմը ծառերի վրեն հասած թաց մեյվա էղնի, մեկէլ թարավ չոր մեյվաների ամեն տեսակ շարած էղնի, սաղ ճամբեք խալի-խալիչա փռած էղնի, տեսակ տեսակ ծաղիկներ փռած։ Հ՞էգու վրեն էլ ծածկված էղնի, որ արև չդիպնի թագավորի աղջկա վրեն։ Ճամբի վրեն սեղան-

ներ շարված էղնին, սեղանների փեշխունների վրեն ամեն տեսակ խմիչքներ ու կերակուրներ հաղր էղնի, յոթ ղաթ էլ դահոլ զուռնա ու ամեն տեսակ չալղիներ դրստված էղնի։ Էս թոմրից հ՚ետև նոր հարս ու թաղվոր իմ իշխներով ղայդով, չալղիով էրթան պսակ ու էն ղայդին հասնին ինչունի ձեր տուն։ Թե որ էս բանն էլ դրստեցիր, ղաթի աղշիկս քու հարսն է, թե չէ գլուխդ կը զարնեմ։

Մոլրութուն նոր առավ Միրզա Մահմուտի հորը, էս թոմար հ՚ուրտից պտի կարա դրստել։ Հ՚ելավ գլուխ կախեց ու դառավ էկավ, թագավորի էս հեղվան հ՚ուզածն էլ թոմար պատմեց Միրզա Մահմուտին։

Միրզա Մահմուտի թալաշ չէր, թագավոր ինչ հ՚ուզում էր թող հ՚ուզեր, էնոր համար դրստելը չաթին բան չէր։

Մարդ ու կնիկ էլի գիշեր դինշ պարկում քնում են։ Միրզա Մահմուտ մատնու ակը պտտցնում է, արաբներ գալում են։ Միրզա Մահմուտը թագավորի էս ետի հ՚ուզածն էլ ասում է, արաբներ էրթում են շինելու, Միրզա Մահմուտ դինշ պառկում քնում է։

Առավոտուն սաղ քաղաք էս հրաշքներ որ տեսնում են, զարմանում են, բերրնները մնում է բաց, իրանց բան ու գործ թողնում, առուտուր, թուքնճիկ իրանց թուքները փակում սեյրի են գալում։ Էս հրաշքների ձենը սաղ աշխարք ցրվում է։ Թագավորն էլ հ՚ելնում աշում է, ի՞նչ աշե, մի ղոշա տղման հ՚էգի, աստուծութուն ինչ տեսած ծառ ու ծաղիկ ասես ստեղծեր է էտ հ՚էգու մեշ, մեկ թարավ ծառերից կախված հասած ամեն ջինս մեյվեք։ Մեկ թարավ չոր մեյվեք, ճամբեքը սաղ խալի փռած, փեշխուններ դրած, ամեն թավուր խմիչքներ ու եմակներ վրեներ շարած, չալղիներ հաղր կայնած չալում են, խաներ ու բեկեր նստած կերուխում են անում, վերև ծածկրված, արև չի դիպնում, թավուր-թավուր ղշեր ու բիլրուլներ ծառերի վրեն խոսում էին։ Միրզա Մահմուտն էլ իր թաբդիրով էկեր կայներ էր։ Թագավորի բերան մնացեր էր բաց, հեչ չ՚գիտեր, որ թոմար հազիր են, իրան են աշում։

Թագավորն էլ ներս մտավ, իր աղջկան հագուց, զուքեց խասխաս շորերով, ախր գիտեք, թագավորի աղջիկ մոնց շորեր կը հագնի, էնենց էր սիրունցե թագավորի աղջիկը, որ արևից սիրուն էր գառե։ Թագավորի պալատն էլ հարսնիքի թաբդիր տեսավ, զարթրվավ, էկան թագավորի կարգած աղջիկներ ու փեսեք։

Միրզա Մահմուտն էլ իր շորեր հագած իր մի թախում ազարների հետ էկավ թագավորի դուռը կեցավ, հարսին էր բաքլայում։ Միրզա Մահմուտի սիրունութունը, էնոր շորերի փելփլալը, ոք սաղ

անգին քարերով էր զարթրված, հալղի խելքը տարեր էր։ Մեկ էլ աչեցին, թագավոր իր աղջկա ձեռքից բռնած մեկել քուրերի հետ դուրս էկավ, բերեց իր աղջկա ձեռքը տվեց Միրզա Մահմուտի ձեռքըն, օրշնեց իր թագավորական ու հորական բերնով, մեկեն գոռաց՝ չալղիներ, բաշլայեց քեֆ ու ուրախութուն։ Որը պար էր խաղում, որը ուտում, խմում քեֆ էր անում, որը թազա հասած մեյվա էր ծառերից քաղում ուտում, որն էլ՝ չորը։ Ամեն մարդ իր սրտի հ՚ուզածն էր անում։

Էտ թոմրի մեջ ուրախ չէր մինակ Միրզա Մահմուտը։

Էսենց չալղիով, պարով, ուտել խմելով ու քեֆով, խալի խալիչաների վրայով թագավորի տնից գացին ինչունի Միրզա Մահմուտի պալատներ։ Էս քեֆն ու ուրախութունը, էս հարսնիքը քշեց օխտն օր, օխտ գիշեր։ Օխտն օր որ թմմավ, ամեն մարդ դարձավ իր տուն գնաց, մնացին Միրզա Մահմուտն իր կնիկ ու հերն ու մերը։

Մարդ ու կնկա ուրախութան էլ ճոթ չկար, ուտում խմում, իրանց քեֆն էին անում։

Մի վախտ էսենց անցնում է։ Միրզա Մահմուտն ու թագավորի աղջիկ ամեն օր էրթում էին խաս բաղչեն, ման էին դալում իրարու ձեռք բռնած, բեզրում, դալում մառմառ հավուզի գլխին նստում դինչանում էին։ Թագավորի աղջիկ շատ ուրախ էր, հմա Միրզա Մահմուտի նիաթներ իսկի չէր բացվում։

Օրմ մառմառ հավուզի գլխին, ծաղկների մեջ նստած, թագավորի աղջիկ կոսե,— Միրզա Մահմուտ, գլխիդ, արևիդ ղուրբան, դու յաղո՞ւղ ես հ՚ամեն օր նիաթներդ էտենց կախում, բայլու է, որ իմ սիրունութան չես հավնում, որ հեչ չես բացվում։

— Ես որ քու սիրունութան չ՚հավնեի, յաղո՞ւզ էի քեզ առնում։ Ես ուրիշ բանի համար եմ նիաթներս կախում։ Հ՚եգուց հերդ մի լավ քեֆ է սարքում։ Էնտեղ թոփ պտի էղնին ինչքան որ մեծամեծ մարդիկ կան, իր վազիր նազիրներ, ընտեղ գալում են քու էրկու քուրերն ու իրանց նիշանածներ։ Մեզ էլ կհրավիրեն։ Քեֆ ու ուրախութունից հետո պտի չիրինդ խաղալու հ՚ելնին, սաղ իրեք օր պտի չիրինդ խաղան։ Էս քաղքի մեջ ինչքան որ լավ չիրինդ խաղացող կա, պտի թոփ էղնին, հորդ էն էրկու փեսեն էլ, ես էլ հոտ կէղնինք։ Դու քու քուրերուդ հետ կը նստիք բատնի վրեն ու մեզի սեյր կոնեք։ Էտ վախտ ես իմ ղըլղը փոխում եմ, իմ մոտ երեք հատ հրեղեն ձիու մազ ունիմ՝ մեկը սև, մեկը կարմիր, մեկը ճերմակ։ Օրական մեկ մազը կրակ կտամ մեկ ձի կուգա ես կը հեծնիմ, կը հ՚ընկնիմ չիրինդ խաղացողների մեջ, բաճանաղներիս լավմ կը ծեծեմ ու ձին կը քշեմ կէրթամ,

դոսղը բաց կը թողնիմ։ Երեք օր հիրուր վրա էսենց կոնեմ։ Էտ վախտ քուրերդ դլխուդ կուտան ու կոսեն թե. «Դու էլ գիտես մարդ ես առեր, աշո՞ւմ ես մեր մարդիկ, որ սաղ ձիավորներ էնոնց դեմ դողում են», էսենց հա գովում են իրանց նիշանածներին։ Դու օնչիչ չասես, ես քեզի թամբիհ եմ անում, ինչ կոսեն թող ասեն, դու ձեն մի հանե, ըլլիմ չիմանամ որ ասես. «էն լավ ձիավորը Միրզա Մահմուտն էր», ամա որ ասիր, ես կը դառնամ մի սև ամպ, էրկնքու հ'երեսից քաշվիմ կերթամ, մեր հարստությունը կէրթա, տներն էլ, հ'էդին էլ, ամեն բան էլ։ Ընդից հետ էլ որ դու հ'ուզենաս ընձի գտնել, պտի հագնիս էրկթե շարուխ, ձեռքդ առնիս էրկթե բիր, ջերդ պտի լցնես կորեկ, էնքան պտի ման գաս իմ հետևեն, ինչունի որ էրկթե հ'ոտնմներդ մաշին, բիրը մաշի, կարճնա, մեկ ձեռք բռնելու տիտ մնա, կորեկն էլ ջերիդ մեջ փթի, հող դառնա, նոր դու կարաս ընձի հասնել։ Ամա, որ քուրերդ ինչ որ ասեն դու ձեն չհանես, մենք էն վախտ շատ բախտավոր կէղնինք։ Ամա, կնիկ մարդուն էհդիպար չկա, ես վախենում եմ, որ դու ասես, ես էտոր համար էլ չեմ ուրախնում։

Հ'իրկուն էր, թագավորի թալալը ճվում էր քաղքի մեջ թե.—Թագավոր լավ ուրախություն ունի. հացկերություն պտի էղնի հ'եգուց։ Հացկերությունից հետև երեք օր հ'իրուր վրա ջիրինդ պետք է խաղան, հոն կ'եղնին թագավորի երեք փեսեն։ Էրկու մեծ փեսեն Միրզա Մահմուտի հետ ջիրինդ պտի խաղան, վեվ որ լավ ձի ունի, թագավորի հրամանն է, որ ջիրինդ խաղալու գա։ Վեվ որ թագավորի հրաման չ'կատարե էնոր գլուխը կ'էրթա։

Հ'եդսի առավոտ չալղին չալվում էր, դահոլ զուռնեք փչում էին։ Հ'ուրտի որ պտի հավաքվեին, էկան մարդիկ թոփ էղան, բաշլայեցին հացկերություն ուտել, խմել, քեֆ անել։ Քեֆի մեջտեղ նստած էր թագավորն ու Միրզա Մահմուտը, թագավորի մեկել փեսեքն էլ էս կողքին ու էն կողքին էին նստում։ Հացկերություն որ վերջացավ՝ բաշլայեցին ջիրինդ խաղալը։

Թագավորի էրկու մեծ փեսեք իրանց քահլան ձիանու վրեն նըստած քշում էին ըստուր ընտուր հետևեն։ Քաղաքի լավ ջիրինդ խաղացողները թոփ էին եղած հոտ։

Միրզա Մահմուտ գողտուց հ'ելավ քաղքից դուրս, կարմիր ձիու մազը վառեց, հրեղեն ձին խրխնջալեն էկավ Միրզա Մահմուտի մոտ կայնավ։ Միրզա Մահմուտ ղըլլղը փոխեց, հեծավ հրեղեն ձիուն, քշեց մտավ մեյդանը։ Ձիավորներ ահեկուն թոմար դես ու դեն փախան։ Միրզա Մահմուտը իր ձեռքի հաստ բրով թագավորի մեկել

փեսեքուն լավմ ծեծեց, ու հայդե դուս պրծավ դիպա դաշտ, ձին թողեց, ինք դառավ էկավ, ինչրխ որ հեչ բանից խարար չէղնի։

Թագավորի երեք աղջիկ, որ բարձր բատնի վրա նստած սեյր էին անում, էրկու մեծ քուրեր բռունցքով տվին պզտիկ քուրոշ գըլխուն.— Հողս գլխիդ, դու էլ գիտես թե մարդ ես առե, որ քոշեքն է մտնում, օձը հալբադ պատի ծակ է մտնում, տեսա՞ր մեր մարդիկ ի՞նչ արին, թոմրին վռնդեցին։

— Է՛հ, ամեն մարդ իր բախտից շորվի, աստուծ ընձի էտ օձն էր կամեցեր, փառք իրան։

Էտ օր անցավ։ Մարդիկ ցրվան, գնացին, ամա թոմարն էլ զարմանքով էին խոսում կարմիր ձիավորի վրեն։ Հեչ, օնչով չէր հ'իմանում, թե էտ վով էր։

Հ'եգսի օր էլի թոփ էղան շիրինդ խաղացողներ։ Թագավորի երեք աղջիկ էլի իրանց աեղ նստած սեյր էին անում։ Թոփ էղան մարդիկ, իրանց խաղի ու կեր ու խումի հետն էին, բիրդան Միրզա Մահմուտ կորավ։ Գնաց քաղքից դուրս, ճերմակ ձիու մազը վառեց, հրեղեն ձին թամ դրուստ խրխնջալով էկավ Միրզա Մահմուտի մոտ կայնավ։ Հեծավ ձին, շորեր փոխեց ու էլի քշեց, մտավ մեյդանը։ Ահ ու դող հ'ընկավ թագավորի էրկու փեսի սիրտը։ Միրզա Մահմուտ էկավ մտավ մեյդան դես քշեց, դեն քշեց հ'ընկավ թագավորի փեսեքու հետևից իր հաստ բրով լավ ջախ ու փորթ արեց ու թողեց փախավ քաղքից հ'ելավ, ձին թողեց, էլի էկավ մտավ քեֆ էնողների մեջ։

Մեծ քուրերը էլի բռունցքով տվին պզտիկ քուրոշ գլխուն ու վրեն խնդացին։ Միրզա Մահմուտի նիշանածն էլի ձեն չհանեց ու բանմ էլ չասեց։

Սաղ քաղքի մարդիկ, մեծ, պզտիկ, աղքատ, հարուստ, վազիր, նազիր զարմացեր էին էս բանի վրեն։

Քեֆի, ուրախութան և շիրինդ խաղալու էրկօրը անցել էր։ Հ'եգսի առավոտ էլի ամեն օրվա մարդիկ ու քաղքցիք թոփ էղան, ամեն մարդ իրա տեղը նստավ, էս շիրինդը հետի հեղվանն էր։ Թագավորի աղջիկներ էլի իրանց տեղն էին նստել։ Դահոլ զուռնեն չալում էին։ Թագավորի էրկու փեսեն էնքան էին քյոթակ կերել, որ գիշեր ցավից չէին քնած, էլ ամեն օրվա պես քեֆով մեյդան չէին մտնում։

Շիրինդը սարքեցին։ Միրզա Մահմուտն էլ ըսկի քեֆ չուներ, գիտեր, որ կնիկը էտ օր պտի շղիմանա դյուզը կոսե քուրերուն։ Հ'ելավ քաղքից դուրս, էս հրեղեն սև ձիու մազը վառեց, սև ձին էկավ, հեծավ, ղըլաղը փոխեց ու մտավ մեյդանը։ Նես տվեց, նեն տվեց, հա-

ասավ Թագավորի փեսեքուն։ Խեղճերու ծնկները Թուլացան որ էլի տեսան հրեղեն ձիավորին։ Էս հեղին Թոմարն էլ հասկըցան, որ էտ ձիավորը Միրզա Մահմուտն է։

Հրեղեն ձիավորը հասավ, ձեռքի հաստ ըրով բաճանագների լերթերուն ամեքուն մի քանիս հ'իշավ։

Թագավորի մեծ աղջիկ դառավ ըսավ իր պզտիկ քուրոջ.— Աշո՞ւմ ես, մարդդ էսենց օր ծակ է ման գալում որ մտնի, դու էլ խնդում ես մեր մարդկանց վրեն, հապա մեկ էն էլ տղամարդու պես գար մեյդանը մտներ, նոր դու կը տեսնեիր։

Պզտիկ քուրոջ համբերուԹուն էլ չտարավ։ Լեզուն չորնար, բալքի չխոսեր։ Բիրդան դառավ քուրերուն.— Անզգամներ, չի համար եք իմ գլխիս տալում, էն սև հրեղեն ձիավորը Միրզա Մահմուտն է, որ էս երեք օր ձեր նիշանածներուն էտ օրը քցեց։

Էս խոսքերը էնենց հերսոտելով որ ասում է, հալը Թոմար աշում են էտ սև հրեղեն ձիավորին, Թագավորի աղջիկներն էլ տեսան, որ Միրզա Մահմուտը իր ձիով դառավ սև ամպ ու գնաց ամպերու միջով։ Հալը Թոմարի էտ սև ամպին էին սեյր անում։ Մեկ էլ հետ դառան, որ ըխթիարի տներու տեղ ոչ քոշք ու սարայի, ոչ լավ տուն, ոչ հ'էգի, ոչ էլ ջաղաց, էլի մնացեր է ըխթիարի ալաչուխը, էլի էն աղքատ, քասիր մարդիկ, նստած անիծում էին սաբիբին։

Էս բան որ էղավ, Թագավորի աղջիկ փոշմնավ, ամա էլ ի՞նչ օգուտ, չգնաց հոր տուն։ Հագավ սգի սև շորեր ու էկավ նստավ իր կեսուր, կեսրարի մոտ ալաչուխի մեջ ու ամեն օր լալում էր։

Անցնում է էսենց մի քանի օր, Թագավոր դիտե Թե աղջիկը Միրզա Մահմուտին հիմի մոռացել է։ Կանչում տանում է տուն, որ մի քիչ սիրտը բացվի։

Թագավոր շատ է համոզում աղջկան, որ Միրզա Մահմուտին մոռնա։ Տեսնում է, որ ճար չկա, իլլաճ չի էղնում, սոնզ, աղջիկ վերցնում ասում է հոր.— Թե որ դու ընձի հ'ուզում, ունգունում ես, առ ընձի համար մի շուխտ էրկՄե հ'ոտնման, մի հատ էլ էրկՄե բիր, որ ես սաբախտան պտի էրթամ։ Ինչունի չ'հասնիմ Միրզա Մահմուտին ես պտի չկայնիմ։

Հ'եգսի առավոտ հոտնամաներն ու բիրը հաղր էր։ Թագավորի աղջիկ հագավ հ'ոտնմները, բիրը ձեռն առավ, մի ջերն էլ լիք կորեկ լցեց ու Թոմրին մնաս բարով ըսեց, էկավ կեսրարի ու կիսրոջ ձեռները պաղեց ու հ'ընկավ ճամբա։

Գնաց, գնաց, շատ գնաց Թե քիչ, աստված գիտե, հասավ մի օիրուն չայիր-չիման տեղ։ Հեռվեն աշում է, որ էտ չայիր-չիման տեղ

մի սիրուն ճերմակ պատերով տուն է էվերում։ Դեմ էրեց էտ տուն ու գնաց։ Գնաց հասավ դուռը, աշեց որ մեկ մարդ նստած էր էտտի։

— Բարև քեզի ամի։

— Ասսու բարին, թագավորի աղջիկ, էկար Միրզա Մահմուտին գտնելու հա՞։

Թագավորի աղջիկը զարմանում է, որ էտ մարդը իրան ճանչցավ ու իրանց գործի էղելությունն է գիտե, էլ չի հ'ուզում բան թագցընել, ասում է.— Ամի ջա՛ն, դու որ ընձի ճանչցար ու մեր էղելութուն էլ գիտես, բայլու է որ դու Միրզա Մահմուտի տեղն էլ գիտես, խնդրեմ ասես, աճապ կարա՞մ գտնել, թե չէ։

— Հե՞յ օրթի, Միրզա Մահմուտին էրթալ հասնելը շատ չաթին է, դու մո՞նց պտի էրթաս ու հասնիս ու էնոր դտնիս։

— Դու տեղն ըսա, ամի ջան, տեղ որ գիտնամ հ'ուրտի էլ որ էղնի կ'էրթամ, ինչունի որ մեռնիմ, էս տանջանքից ազատիմ։

— Որ էտենց է օրթի, ես քեզի կոսեմ։ Միրզա Մահմուտի ճամբի վրեն երեք հատ դև կա, երեքն էլ հ'իրուր քուր են ու հ'իրարուց բաժան են։ Հ'առջին էրկու քուրերը ամենք օխտը տղա ունին։ Տղերքը սաբախտան էրթում են, հ'իրկուն գալում են տուն։ Թե որ դու կարացիր էն վախտը հասնել, որ պզտիկ քուրը նստած հաց է թխում, հաց թխած վախտ իրան ծծերը հ'ուսերի վրայից քցում է հետև, էնենց պտի էրթաս, որ էն վախտը հասնիս ու ծծեր հետևեն բերանդ առնիս ու ծծես, թե որ էտենց կարացիր անել, զաթի քեզի կազատե, թե որ չարեցիր, քեզի կը բռնե, խորվու կոնե իր տղերանց համար։

Միրզա Մահմուտն էլ էտ դևի մեծ քուրոջ աղջկա հետ նիշանվել է, քառսուն օր է մնում, որ հարսնիք անեն, պսակեն։

Թագավորի աղջիկ էս խրատներ առավ ու շնորհակալ էղավ ու գնաց։ Էրթում հասնում է պառավ դևի մոտ։ Էն վախտն է հասնում, որ դևը չափուկ-չափուկ հաց է թխում։ Էն մարդու ըսածի պես ծծեր հուսերի վրայից հետևեն կախ է քցե։ Գաղտուկ ուսուլ ուսուլ էրթում, բիրդան պառվի ծիծը առնում է բերան ու ծծում է։

— Թո՛ղ, օրթի, դու էղար ընձի աղջիկ, հ'ուզե, մուրազդ տամ։

Թողնում է պառավի ծիծը, էրթում է ձեռը պագում է։ Ինչրխ տան աղջիկ բաշլայեց տուն վեր քաղել, ավելել, մաքրել թամուզցընել։ Ամեն բան իր տեղը դրեց։ Բանը որ պրծնում է, պառավ դևը կոսե.— Օրթի դու չէիր վախենում, որ էկար հասար ըստեղ, չէիր ըսում որ «իմ մեծ կտորս հ'անկաջս կը թողեն»։ Ըսե աշեմ քու դարդը ի՞նչ է, հալբաթ դու մի բան ունիս էս տեղեր։

— Իմ դարդս, էս է քալե ջան, ես դեմս եմ արել էկել քեզ մոտ որ դու ընձի հասցնես Միրզա Մահմուտին։

— Շատ լաթին բան հ՚ուզեցիր, օրթի։ Միրզա Մահմուտը հիմի իմ մեծ քուրոջ մոտն է, էնոր ձեռն որ հ՚ընկար քեզի կտոր-կտոր կոնե։ Օրթի, ես օխտը տղա ունիմ, դացել են ավուղուշ, իրկուն դալում են, հ՚եդուց տղերքս քեզ կը տանեն ինչունի միջնակ քուրոջս սինոռը ու կը դառնան։ էն էլ օխտը տղա ունի, թե որ ռասթ բերիր էնոր էլ հաց թխած վախտ ծիծը ծծեցիր, էն էլ քեզի կը հասցնե ինչունի մեծ քուրոջս սինոռը, ընտից էլ Միրզա Մահմուտին։ Հմիկ քեզի կը պահեմ, տղերքս կգան ես կոսեմ, թե աստուծ ձեզի մեկ քուր է տված, տղերքս կոսեն թե. «Հ՚ուր է մեր քուրը, բեր տեսնինք»։

Հ՚իրկվան մոտ էր, պառավ դևը տանում աղչկան պահում է։ Տղերքը դալում են տուն, հոտ են քաշում.

— Ատե, մեր տնից աղամ օրդու հոտ է դալում, մեր սինոռ մարդ է մտեր, խորվե՞ր ես որ ուտենք։

— Օրթի, աստուծ ձեզի մի քուր տվեց, էն կաթից որ դուք եք կերել, էն էլ է կերե, էղավ ձեզի քուր։

— Որ էտենց է ատե, բեր մեր քուրոջ տեսնինք։

Պառավը էրթում բերում է թագավորի աղչկան, տղերք հետ բարևում են։ Աղչիկ պաղ ջուր բերում աղբրտանց հ՚ոտները լվանում է։ Դինջանում են, հաց են ուտում, հետո պառվի տղերքը թագավորի աղչկան ասում են։

— Ի՞նչ է քու մուրազդ, հ՚ուզե։

— Իմ մուրազս էն է աղբրտիկ, որ դուք ընձի հասցնեք Միրզա Մահմուտին, ուրիշ մուրազ չունիմ։

— Քուր ջան, դու շատ դժար տեղ կապեցիր, հմա ինչ արած, խոսք են տված քեզի, պետք է տանենք, ինչունի մեր մեծ մորքուրի սինոռն ու դառնանք։

Սաբախտան վաղով պառավի էրկու տղեն առնում թագավորի աղչկան տանում են ինչունի իրանց մորքուրի սինոռն ու դառնում գալում են։

Թագավորի աղչիկ էրթում, էրթում աշում է, որ պառավ դևի թունդրի մուխը հ՚ելնում է, էն վախտին է հասնում, որ պառավ դևը նստած հաց է թխում, ծծեր հ՚ուսերի վրայից քցեր է հետև։ Գաղտուկ էրթում է, բիրդան ծիծը առնում է բերան ու ծծում է։

Պառավ դևը ասում է.— Ա՜յ հողածին, բաց թող իմ ծիծս, ես քու մուրազդ կատարեմ, դու էզար ընձի հոգևոր ավլատ։

Աղչիկ թողնում է պառավ դևի ծիծն ու ասում է.— Ես ուրիշ

փափակ չունիմ, իմ մուրազս էն է, որ դու ընձի հասցնես Միրզա Մահմուտի մոտ։

— Թագավորի աղջիկ, էտ շատ դժար տեղ կապեցիր։ Միրզա Մահմուտը հիմի իմ մեծ քուրոջ քովն է, էնոր աղջկա հետն էլ նիշանված է։ Հ'երսունինները մոլլա զոր ու գիշեր ծառայում են, ես քեզի հմիկ թամբիհ կոնեմ՝ ես օխտ հատ տղա ունիմ, օխտն էլ ավուղուշ են գնացել, հ'իրկուն կուգան, տեսնինք, տղերքս ինչ կոսեն։

Թագավորի աղջիկ հ'ելավ պառավին օգնեց, տուն հ'իստկեց, հացեր վեր քաղեց, բանից պրծան, հ'իրկվան տղերանց գալու վախտըն պառավ դևը տարավ աղջկան պահեց։

Հ'իրկուն տղերք տուն էկան, թե չէ.— Հը՞, ատե, մեր տնից հողածնի հոտ է գալում։

— Հա, օրթի, դուք քուր չունեիք, աստուծ ձեզի մե քուր տվեց, էն կաթեն կերավ, որ դուք եք կերած, էղավ ընձի հոգու զավակ։

— Թե որ էտենց է, բեր մեր քուրոջ մենք էլ տեսնինք։

Թագավորի աղջիկ էկավ աղբրտանց ձեռքերը պագեց, պաղ ջուր բերեց հ'ոտներները լվաց, ղինջացան, հաց կերան։

Պառավի տղերք վերցնում, ասում են աղջկան.

— Հուզե, մուրազդ տանք։

Աղջիկն ասում է.— Իմ մուրազն էն է, որ դուք ընձի Միրզա Մահմուտի մոտ հասցնեք։

— Քուր ջան, Միրզա Մահմուտին հասցնելը շատ դժար է, համա ինչըխ անենք, մեր պարտքն է, որ կատարենք, չարեն ինչ, մենք քեզի ինչունի մեր սինոռի գլուխ սաղ-սալամաթ կը տանինք, ընտից էն գին անցնելու իրավունք չունինք, դու դիտես։

Սաբախտան դևերուց էրկուսը հ'ելան, որ աղջկան տանին։ Պառավ դևը գալում ասում է աղջկան.— էն վախտ որ էրթում հասնում ես մեծ քուրոջս սինոռին, որ Միրզա Մահմուտն էլ հոն է, էնոնց տան մոտ մի լավ հ'աղբուր կա, վրեն ուռի լավ լավ ծառեր տնկած, կ'էրթաս էն ուռի ծառերի մեջ կը նստես դիս։ Միրզա Մահմուտի հ'երսունինները մոլլեք գալում են ջրի, ամեն մեկի ձեռք մի գյուգյում կա, էն մեկին էրկու օսկե գյուգյում, մեկը Միրզա Մահմուտին է։ Մոլլային կոսես, թե. «Տո՛ւր, էս օսկե գյուգյումով մի քիչ ջուր խմեմ», էն կուտա, թե որ Միրզա Մահմուտին նշան կա մոտդ, կը քցես գյուգյումի մեջն ու կը ղրկես։ Միրզա Մահմուտը կը ղրկե կը տանի դիս։ Թե որ էտենցով կոցիր Միրզա Մահմուտին հասնել կը հասնիս, թե չէ ուրիշ իլլաճ չկա։

Աղջիկը մնաս բարով արեց ու հայտե շտկվան դեպի մեծ քու-

բոչ սինոորը։ Գնացին հասան ինչունի մեծ պառավ դևի սինոռն ու ընտեղից պառվի տղերքը աղչկան մնաս բարով արին ու հետ դառան։ Աղչիկը գնաց, գնաց հասավ աղբրին ու կանանչ ուռի ծառերի տակ նստավ։

Գիշերը էտ կանանչ սիրուն ուռերու տակը մնաց, ինչունի լուս չքնավ, հազար թավուր բաներ անցավ աղչկա մտքով, բիրդան ձեռը տարավ չեր, աշեց, որ լցած կորեկներ փթեր հող էին դառել, աշեց, որ հ'ոտնմաններն էլ են ծակվեր։

Արևն նոր էր քիչ տաքցեր, թագավորի աղջիկ աշեց որ հ'երսունուինները մոլլեն էկան հ'աղբրից ջուր տանելու, աշեց որ թոմրի ձեռք մի մի դյուգյում էր, էն մեկին էրկուս, էն մեկն էլ օսկի։

Աղջիկ էտ մոլլային աղաչեց թե.— էս օսկի դյուգյումը տուր քիչ ջուր խմեմ։

— էս օսկի դյուդյումը Միրզա Մահմուտին է, ես մո՞նց տամ, որ դու ջուր խմես։

Թագավորի աղջիկ էնքան յալվար հ'ընկավ, ինչունի որ մոլլի ձեռքից առավ ջուր խմեց ու գողտուկ Միրզա Մահմուտի մատնին, որ մնացեր էր իր մոտ, հանեց քցեց գյուգյումի մեջ։ Մոլլեն առավ գնաց, աղջիկը մնաց հոտ։

Մոլլեք գնացին տուն։ Միրզա Մահմուտ հ'ելավ լվացվելու։ Լվացվում էր, բիրդան աշեց, որ մատնին գյուգյումի միջեն հ'ընկավ։ Միրզա Մահմուտը ուրախութունից էլ չհ'իմացավ թե ինչ անե։ Կանչում է մոլլային ու ասում է.— Դուք իմ էս գյուգյումը հ'ո՞ւմ ձեռն եք տված, հ'աղբրի վրեն զարիր մարդ կա՞ր։

— Հրամանք ես, Միրզա Մահմուտ, ընտե մի զարիբ մարդ կար, շատ յալվար էղավ, մենք էլ տվինք ջուր խմեց։

— Դե՜հ, որ էտենց է, չորս հինգ հոգի գացեք, էտ մարդուն հոս բերեք, ամա էնենց բերեք, որ օնչով չ'տեսնի։

Մոլլաներից մի քանիս շտապոք գնացին առան էտ զարիբ մարդուն, փաթթեցին, որ օնչով չտեսնի, ու բերին Միրզա Մահմուտի մոտ։ Միրզա Մահմուտը շատ ուրախցավ ու էտ մարդուն, որ իրանից դայրի օնչով չէր ճանչնում, բռնեց իր ձիուն մշակ ու թամբիհ արեց, որ դուս չէլնի։

Անցավ մի քանի օր, Միրզա Մահմուտ էլ էնքան չէր էրթում իր նիշանածի քով։ Շաբթուն մեկ անգամ անչախ էր պատահում։ Պառավ դևը կատղում է, հ'ելնում էրթում է Միրզա Մահմուտի մոտ ու ասում է.— Միրզա Մահմուտ յաղո՞ւզ, դու հ'առաջ ամեն օր էիր դալում աղչկաս մոտ ու հիմի շաբաթ մի հեղ էլ չես գալում, էտ քեզի

ի՞նչ ձեռք տվեց։ Ինչրխ որ էս թաղա ձիապահը բռնեցիր, իմ աղջկա մոտից պաղար, դու սարր արա, տես թե ես ինչ կբերեմ քու ձիապանի գլխուն։

Էտ պառավ դևը, հ՚իցսուն հատ դևվա էր պահում։ Մի վախտ էտ դեվեք ծարավ էին, մի օր գալում կանչում է Միրզա Մահմուտի ձիապահին ու ասում է.

— Էս դեվեք կը տանիս դես էն հանդը կը կայնեցնես, էս քուղով էլ էնքան հ՚առվից ջուր կը կրես խմեցնես ինչունի որ կուշտ խմեն, ես կը հ՚ելնիմ հ՚երթիկը կաշեմ. հ՚իրկուն դեվեք որ ծառավ էկան՝ քու մեծ կտոր քու հ՚անկաջը կը թողեմ.—Պառավը հերոստ էտ թամբիհը տվեց ու գնաց։

Միրզա Մահմուտ կանչեց ձիապահին, որ իր հ՚առջի նիշանածն էր, թաղավորի աղջիկ ու ասաց.— Դու մի քուղով հիցսուն դեվա չես կարա ջրել հանդում։ Դեվեք կը տանիս հանդ, կը կայնեցնես ու դու կէրթաս գետի մոտ ու կոսես. «Ջրեր, Միրզա Մահմուտը մեռել է, արեք էրթանք լողացնենք» ու դու հ՚առաջ կը հ՚ընդնիս, կը վազես, ջրերն էլ քու հետևից կը վազեն։ Որ ջրիր պրծար, կոսես. «Ջրեր հերիք է, դառեք ձեր տեղ Միրզա Մահմուտին լողացուցինք պրծանք»։ ջրերը դառնում էրթում են, դու դեվեք առ արի տուն։

Առավոտ վաղով թագավորի աղջիկ պառավ դևի դեվեք խառնեց հ՚առաջ մի քուղա էլ առավ ու քշեց գնաց հանդը։ Դեվեք կայնեցուց, գնաց գետի մոտ, ինչրխ որ Միրզա Մահմուտ իրան խրատ էր տված, էնենց էլ ըսավ ու հ՚ընկավ ջրի հ՚առաջ վազեց, ջուրն էլ իր հետևից։ Էկան հասան գեվեքուն, դեվեքը խմեցին, կշտացան։

Թագավորի աղջիկ ըսեց.— Ջրեր, ձեր տեղ դառեք, Միրզա Մահմուտին լողացուցինք պրծանք։— Ջրերը դառան իրանց տեղը գնացին։

Թագավորի աղջիկ դեվեք խառնեց հ՚առաջ, քշեց էկավ տուն։ Պառավը վազեց մի քուղա ջուր բերեց, էս դեվի հ՚առաջ դրեց, էն դեվի հ՚առաջ դրեց, հեչ մեկը չը խմեց։

Պառավ կատղած դառնում Միրզա Մահմուտին ասում է.— Էս թոմար քու սորվեցրածն է, թե որ դու չէղնեիր, էտ մարդ չէր կարա դեվեք ջրել, դու պտի էլ քու ձիապահի հետ չը խոսիս։— Միրզա Մահմուտը երդում է անում չխոսելու։

Պառավ դառնում թագավորի աղջկան ասում է.— Հ՚եգուց էրկու դեվա կառնես կէրթաս էն դիմացի էվերող սարը, էրկու բեռ ղշի բրմբուլ կը լցնես կը բերես, որ իմ աղջկա յորղան դոշակ բմբուլից լցնեմ։

Հ՚իրկուն որ գալում պարկում են, Միրզա Մահմուտ իրան-իրան

ասում է. «Ես որ էղնիմ էն սարին բմբուլ թոփ էնող կոսեմ՝ ղշեր թոփ էղեք, էկեք, Միրզա Մահմուտը մեռել է, էնոր հոգու հացը կտանք, որ էկան թե չէ, ես կը բաշլայեմ իմ մաղերս պոկել, ղշերն էլ հ՚աչք կուտան ընձի, իրանց բմբուլներ կը թափեն, ես թոփ կոնեմ կը բերեմ»։

Թագավորի աղջիկ հասկնում է, որ Միրզա Մահմուտ իրան է ասում։ Հ՚ելնում սարախտան թեզ առնում է էրկու դեվա, քշում էրթում է էն դիմացի սարը։ Հասնում է ընդի, զիլ ձենով ճվում է.— Ղշեր, Միրզա Մահմուտ մեռել է, թոփ էղեք արեք էնոր հոգու հացը տանք։— Մեկ էլ աշում է, որ աշխարքի ճոթերից ինչքան որ ղուշ կա թոփ էղան էկան։ Թագավորի աղջիկ բաշլայեց մաղերը պոկել, ղշերն էլ թոմար իրանց բմբուլներ պոկեցին թափին։ Թագավորի աղջիկ տեսավ որ բեռներից էլ հ՚ավել էղավ, դառնում ասում է.— Ղշեր, հերիք է լաք ու տրորվիք, դառեք ձեր տեղեր դացեք։— Ղշերը ցըրվում էրթում են, աղջիկն էլ թոփ է անում, էրկու բեռ թմում է, բառնում քշում գալում է տուն։

Պառավ էս անդամ էլ ավելի կատղում ու Միրզա Մահմուտին ասում է.— Էս թոմար դու ես սորվեցնում. էս հեզ երթում արա քու արևով, որ չխոսես, թե չէ քու գլուխդ էլ կը կռեմ։

Միրզա Մահմուտ երթում արեց իր արևով, որ չխոսի մշկի հետ։

Պառավ թողեց, էլի դառավ մշկի վրեն.— Սաբախտան թեզ կ՚էրթաս քրոջս տանից կառնես դահուլը կը բերես, որ Միրզա Մահմուտի հարսնիքը անեմ, թե չբերիր գլուխդ կը կռեմ։— Ասում ու պառավը դուս է հ՚ելնում էրթում։

Հ՚իրկուն որ ամեն մարդիկ պառկան քնան, Միրզա Մահմուտն էլ թագավորի աղջկա հետ պառկան քնելու։ Միրզա Մահմուտը էս հեզ մոտ պառկած կատվի հետ էր խոսում։

— Կատու, դու լավ հ՚անկաշ դի, թե քեզի ես ի՞նչ եմ ասում, կատու, դիտե՞ս, պառավ քեզի հ՚ուր է ճամբում։ Քեզի ճամբում է քուրոշ մոտ, որ քեզի ուտե։ Հիմի դու աշե, թե ես քեզի ինչ եմ ասում. սաբախտան որ էս կողմից էրթում ես հ՚առաշ քեզի ռաստ է գալում մեկ կապած ասլան ու մեկ ղոշ, մեկ ճամբու էս կողմ, մեկ էն կողմ։ Դմակ դրած է ղոշի հ՚առաշ, խոտը՝ ասլնին, դու կը փոխես, դմակ կը դնես ասլնի հ՚առջև, խոտը՝ ղոշին։ Ընդից անցնում ես էրթում տեսնում ես որ ճամբու վրեն քցած է էրկու քեչա, փռածները կը վերցնես կը դնես էն կողմ, վերուցածները կը փռես ու կանցնիս։ Ընտից կերթաս կը հասնիս իրան ղռան մոտ, կաշես որ էրկու դուռ, մեկը վաղուց բաց է, մեկն էլ դրած է։ էն դրածը դու կը բանաս, բացը կը

դնես, կէրթաս կաշես, որ ինք նստած է, կը բարեես. էն քեզի կոսե. «Չի՞ համար ես էկեր», դու կոսես թե. «Քուրդ ընձի ղրկեց, որ դհոլը տանիմ, Միրզա Մահմուտի հարսնիքն անե», էն քեզի կոսե. «Նստի մի ձվածեղ անեմ կեր», հ'ելնում է ձվածեղը անում, բերում դնում է քու հ'առջև, քեզ կոսե. «Դու կեր ինչունի իմ դալը», ինքը դուս է հ'ելնում, հ'ակռեքը սրելու, որ դա քեզի ուտե։ էն որ դուս է հ'ելնում, դու թող ձվածեղը, կախած տեղից դհոլն առ ու փախի։ էն քու հետևից կը ճվա, թե. «Բռնե՞ք հա, բռնե՞ք», չէղնի թե դուխտ դառնաս, քեզ էլ օնչով չի բռներ, թե որ էտ թոմարն անես, կատո՛ւ, լավ լսեցի՞ր իմ ըսածներ, քեզ տեսնիմ, թոմար իր տեղին կոնես, չ'վախենաս։

Թաղավորի աղջիկ էս թոմարը լավ լսեց ու սաբախտան վաղով հ'ելավ հ'ընկավ ճամբա դնաց։.

Էրթում հասնում է ասլնի ու ղոչին մոտ, Միրզա Մահմուտի թամբիհ էրածի պես խոտը վերցնում դնում է ղոչի հ'առջև, դմակը ասլնին ու անցնում ընդից էրթում է քեչաների մոտ, դետնի փռածը թոփ է անում ու մեկելը բերում փռում է։ Ընդից էլ անցնում էրթում է դոների մոտ, բացած դուռը դնում է, դրածը բաց է անում, էրթում ներս է մտնում, որ պառավ մենակ նստած է ու դհոլն էլ պատից կախած է։

— Բարև քեզ, քալե։

— Ասսու բարին, դու բարով էկար։ էտ վով քեզի ղրկեց ըստե, չի՞ համար ես էկել։

— Ընձի մեծ քուրդ ղրկեց, դհոլը տանիմ, որ իրա աղջկա հարսնիքը անե։

— Նստիր, որ էտենց է մի ձվածեղ էփեմ, մի թիքա հաց կեր, հ'ետև տար։

Պառավ դևը հ'ելավ ձվածեղ արեց, բերեց դրեց թաղավորի աղջկա մոտ ու ըսավ.— Դու հացդ կեր ինչունի իմ դալը։

Պառավը դուս է հ'ելնում թե չէ, աղջիկ հացը թողնում, առնում է դհոլն ու հայդե փախնում է։

Պառավ հետևից մազերը պոռչկում է ու ճվում.— Դոնե՛ր, բրոնե՞ք, որ տարավ։

— Մենք յաղո՞ւզ ենք բռնում որ, էս քանի տարի մեկս դրած, մեկս հ'ոտած վրեն կայնելով բեզրել էինք, էս մարդ էկավ դրածը բացեց, բացը դրեց։

— Քեչե՛ք, դուք բռնեք, տարա՛վ։

— Մենք յաղո՞ւզ ենք բռնում որ, մեկս դետին էինք մաշեր, մեկս կայնելով բեզրեր, էս մարդը էկավ, մեզի փոխեց։

— Ասլան, զոշ դուք բռնեք, իլլաճը ձեզի մնաց, դուք դիտեք, դհոլը տարավ։

— Մենք չի՞ հմար ենք բռնում, դե՞, քանի վախտ է, որ խոտը իմ հ՚առջեն էր դրած, դմակը զոշին, էրկուսս էլ կայներ աչում էինք անոթի փորով, հմիկ, էս մարդ էկավ փոխեց, մենք մեր փորը կըշտացուցինք, էլ յադո՞ւզ ենք էսենց բարի մարդու բռնում։

Էսենցով, օնչով չբռնեց, թագավորի աղջիկ առավ դհոլ, բերավ տվավ պառավին։ Պառավը տեսավ որ դհոլն էլ էկավ, էլ ի՞նչ կարար անել։ Դառավ Միրզա Մահմուտին ըսավ որ.—Թարղիր տես, որ հ՚էդուց պտի պսակվիս, քառսուն օր թմմավ։

Սաբախտան պառավ դևը լավ թարղիր էր տեսած, թոմար մարդիկ հագվեր էին հարսնիքի ջորեր, զուգվեր էին, պետք էր պառվի աղջիկն ու Միրզա Մահմուտը պսակվեին, դհոլ զուռնեն չալվում էր։

Պառավը հ՚ուզում էր, որ թագավորի աղջկան կորցնե մի հալով։ Էտոր հմար բերում տաս հատ կերոն մոմ կպցնում է թագավորի աղջկա մատներին ու թամբիհ է անում, որ ձեռներ ժաժ չտա, ինչունի տակ վառին մոմեր, օնչով պտի ձեռք չտա։

Տարան պսակեցին բերին։ Պառավ տարավ հարս ու թաղվորին մի ջոկ օթախ դրեց ու թամբիհ արեց, որ քառսուն օր, զօր ու գիշեր դուրս չհ՚ելնին, ու էնոնց քովն էլ մարդ չպտի էրթա, հաց ու ջուր հ՚երթկեն տան։

Թագավորի աղջիկ էնոնց մոտ մնաց կանգնած, մատների մոմեր վառին՝ Միրզա Մահմուտն ու իր աղջիկը ուրախնան, ու մեկ էլ որ մոմերը հատնելուց հ՚ետև բռնե թագավորի աղջկան վառև։

Պառավը էտենցով էլ չկարաց թագավորի աղջկան բան անել։

Հ՚իրիկուն, որ թոմար քնան, Միրզա Մահմուտ հ՚ելավ, թագավորի աղջկա մատների վրայից մոմերը պոկեց, բերեց պառավի աղջկան կոխեց օջախը, նավթ լցեց վրեն ու վառեց։ Ինքը առավ թագավորի աղջկան ու պարկավ։

Էսենց մի քանի օր անցնում է, մի օր էլ Միրզա Մահմուտ հ՚ելնում դիշեր բանում է գուռը, առնում է թագավորի աղջկան ու հայդե դիպա իր հոր տուն։

Միրզա Մահմուտ թող իրա ճամբեն էրթա, մենք դառնանք մեր պառավ դևին։

Սաբախտան պառվի մշկներ, որ հաց են տանում Միրզա Մահ-

մուտին, աշում են որ, ինչ աշեն, մարդ չկա, Միրզա Մահմուտն էլ թագավորի աղջիկն էլ չկան։ Դառնում դալում պառավին ասում են տեսածները։

Պառավն էլ դալում աշում է, որ մարդ չկա, մոմերը հոտ թափած, ինքն իրան ըսում է պառավը. «Աճար Միրզա Մահմուտ իմ աղջիկս է՞լ է փախցրել»։ Դառավ աշեց օջախի մեջ, որ մեկին վառել են։ Պառավ հասկցավ, որ իր աղջկան են վառել։ Պառավ կատղավ, էլ չէր հ'իմանում թե ինչըխ անե։

Պառավ իրեք տղա էլ ուներ։ Կանչում է մեկ տղին ու ասում է.— Հասիր Միրզա Մահմուտի հ'ետևեն, բռնիր կտոր, կտոր էրա ու մեկ կտոր էլ ընձի բեր, որ ես ուտեմ սիրտս հովնա։

Պառվի տղեն մի ամպ էղավ ու թռավ։

Միրզա Մահմուտ դիտեր, որ իր հ'ետևից պտի գան։ Մեկ էլ հետ դառավ աշեց, որ մի սև ամպ դալում է։ Հասկցավ, հ'իջավ գետին, թագավորի աղջկան էրեց նախիր, ինքն էլ էղավ նախրորդ ու նստավ մի սարի վրա։ Պառավի տղեն դալում հարցնում է.— Աղբեր դու ըստեղ ես, մե կնիկ մե մարդ ըստից չանցա՞վ։

— Ես ի՞նչ գիտեմ, որ դու ընձի հարցնում ես, էս էղավ քանի տարի ես ըստեղ մարդու հ'երես չեմ տեսած։

Պառավի տղեն դառավ գնաց տուն, մորն ըսաց.— Ես օնչով չ'գտա, ընձի մի նախրարած ռաստ էկավ, որ իր նախիրն էր պահում, էնոր հարցրի, էն էլ ըսավ որ. «Ես էս տեղեր մարդ չեմ տեսած», ես էլ թողի դառա էկա։

Պառավ հերսոտում ասում է.— Ըշթա էն նախրարածը Միրզա Մահմուտն էր, դու չես հասկցեր։

Կանչեց մեծ տղին ու ըսավ.— Շուտ, գնա հասիր Միրզա Մահմուտին, հ'ուրտի որ հասար կտոր, կտոր կոնես, մի թիքա էլ ընձի կ'բերես, որ ուտեմ սիրտս հովնա։

Մեծ տղեն հ'ելավ, հավատա, ամպերի միջով ու գնաց։

Միրզա Մահմուտն էլ, որ պառվի տղեն հետ դառավ հ'ինք էլի առավ թագավորի աղջկան ու գնաց։

Միրզա Մահմուտ մեկ էլ որ հետ դառավ աշեց, որ մեկ էլի ամպերի միջով գալում է։ Էս հեղ թագավորի աղջկան դառուց մի հասած ցորնի հ'արտ, քաղվորներ լցված մեջ քաղում էին։

Պառվի մեծ տղեն հ'իջավ հարցուց թե.— Աղբեր, դուք ըստե հ'արտ եք քաղում, մի մարդ մի կնիկ ըստից չանցա՞ն։

— Աղբեր, էս քանի օր է, որ մենք ըստե հ'արտ ենք քաղում, մարդու հ'երես չենք տեսած, ան հա', քեզի որ տեսանք։

Պառավի աղեն էլի թողեց, ընտից դառավ գնաց։

Պառավ գալում հարցնում է թե.—Ի՞նչ արիր, սպաննեցի՞ր Միրզա Մահմուտին։

Տղեն ասում է.— Ես օնչովի չտեսա, ընձի ռաստ էկավ մի մարդ, որ քաղվորներ լցած հ՚արտ էր քաղում։ Էն մարդուն հարցուցի, էն մարդ ըսավ. «Ես էս քանի օր հ՚արտ եմ քաղում օնչովի չեմ տեսածս», ես էլ գառա էկա։

Միրզա Մահմուտ էլի առավ թագավորի աղչկան ու գնաց։ Ճամբեն ըսում է թագավորի աղչկան.— Էս անգամ պառավ ինքն է գալում, աշենք թե մո՞նց պրծնենք պառվի ձեռից։

Պառավն էլի կատղավ, տղին հերսոտավ.— Ախր էն հ՚արտվորը ինքը Միրզա Մահմուտն է, քեզի խաբեր է։ Ես օր չէրթամ բոշ է, դուք էնոր հախից չեք կարա գալ։

Պառավը դառավ փոթոթորեկ, հ՚ելավ էնքան բարձր որ վերևից հ՚իջնի ու էրկսին էլ կտոր կտոր էնե։

Միրզա Մահմուտ տեսավ որ պառավ փոթոթորկի պես սև ամպերու միջով գալում է, աշեց, որ էլ իլլաճ չկա, թագավորի աղչկան գառուց մեկ փշոտ ծառ, ինքն էլ դառավ մի վիշապ օձ ու հ՚ելավ ծառի ծերին նստավ։

Պառավ հ՚իշավ ծառի տակ ու կատղած ճվաց.— Անամոթ Միրզա Մահմուտ, դու իմ օշախս քանդեցիր, իմ աղչկան կերար ու թողիր փախար էկար։ Հիմի էլ հ՚ելեր ես փշոտ ծառի ծեր, որ իմ ձեռնեն ազատվիս, յավաշ տես թե ինչ կոնեմ քու դլխուդ։

Պառավ կատղած կռացավ, որ գետնից մի քար վերցնի վիշապին զարնե, էն կռանալու հետ վերևից վիշապ զարկեց պառվու ծոծրակից ծակեց ու գետին քցեց։ Պառավ հ՚ընկավ սատկավ։

Նոր Միրզա Մահմուտը աստծուն փառք տվեց, առավ թագավորի աղչկան ու գնաց։

Էրթում հասնում են թագավորի քաղքին։ Միրզա Մահմուտի ըխթիար հեր ու մերը էլի ժողովք անելով էին ապրում։ Ամեն օր հ՚իրկուն գալում լալում էին իրանց տղի ու հարսի համար։ Թագավորն էլ ամեն օր լալում էր իր աղչկա ու փեսի համար։

Միրզա Մահմուտ, որ հասնում է քաղքի մոտ, ռաստ գալողներից հարցնում է թագավորի ու իր հորն ու մորը, թե «հլա սաղ են թե չէ». որ հ՚իմանում են թե հլա սաղ են, շատ են ուրախնում։

Խաբար էրթում հասնում է թագավորին թե. «Վալլահը չես ասում Միրզա Մահմուտն ու քու աղչիկը էկան»։ Ըխթիարին ու իր կընկան էլ են խաբար տալում թե. «Քու տղեն ու հարսը էկան»։ Սաղ քա-

զաք թունդ հ'ելավ ու գնաց հ'առաջ։ Թագավորը, ըխթիարն ու կնիկ էլ չէին բաժնվում հարսից ու տղից, առել էին իրանց գիրկն ու լալում էին։

Միրզա Մահմուտն ու թագավորի աղջիկ դյուզ գնացին ըխթիարի ալաչուխը։ Թագավոր ինչքան յալվար հ'ընկավ, որ էրթան իր պալատը, իլլաճ չէղավ։

Գիշերը Միրզա Մահմուտ էլի պտտցուց մատնու հակը։ Էրկու արաբը էկան կայնան։

— Շինե'նք, թե քանդե'նք։

— Ձեզնից հ'ուզում եմ, որ իմ հ'առջի պատրաստած ջաղացը, տները, հ'էգին, ամեն բան իր տեղին, հ'ավալքվանեն լավ եմ հ'ուզում ձեզնից, ինչունի առավոտ։

Արաբներ գնացին ամեն բան դրստեցին։ Առավոտ էլի սաղ քաղքի մարդիկ զարմանում էին, թե էլի էս հ'որ էղավ, որ էն քասիբի ալաչուխի տեղ էլի հ'ավալքվա տներ շինվան։

Միրզա Մահմուտ էլի լավ հացկերութուն սարքեց։ Կանչեց թագավորին, իր աղջկներին ու փեսեքուն, վազիր, նազիրներին, սաղ քաղքի հարուստ երևելի իշխաններին, ինչունի հ'իրիկուն կէրան խմեցին, ամեն մարդ հ'ելավ, շնորհակալ էղավ ու գնաց իր տուն։

Ընդից հ'ետև ըխթիարն ու իր պառավ կնիկը մի քանի տարի էլ լավ, ուրախ, ապրան ու պատվով մեռան, Միրզա Մահմուտ տարավ թաղեց։ Ընտից հ'ետև Միրզա Մահմուտն ու իր կնիկը էրեխաներ ունեցան։ Ուրախ ապրում էին, մարդիկ գալում ու ուրախանում էին, որ տեսնում էին Միրզա Մահմուտին ու իր կնկան։

Էնոնք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին։